

ԹԲԻԼԻՍԻ ՄԵՅՂԱՆԻ
ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ
ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

2012-2015 թթ.

Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսին, որը միջնադարյան հայկական աղբյուրներում հիշատակվում է Տփլիս անունով, դարեր ի վեր եղել է հայ-վրացական սերտ առնչությունների, հոգևոր և մշակութային շփումների կենտրոն:

Մեյդանի Սուրբ Գևորգը Թբիլիսիի հնագույն հայկական եկեղեցիներից մեկն է (հիմնավել է 1251 թ.), որը տևական ժամանակ եղել է քաղաքի հայ համայնքի գլխավոր եկեղեցին, իսկ այժմ Վիրահայոց թեմի առաջնորդանիստն է: Միջնադարյան սկզբնաղբյուրներում կոչվում է Կաթողիկե Սուրբ Աստվածածին և Գևորգ Ջորավար, ավելի ուշ, տեղագրական դիրքը նկատի ունենալով՝ Մեյդանի (հրապարակ) Սուրբ Գևորգ կամ Բերդի Մեծ եկեղեցի:

2012-2015 թվականներին Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի և հայտնի գործարար և բարերար Ռուբեն Վարդանյանի նախաձեռնությամբ ստեղծվեց Սուրբ Գևորգ եկեղեցու վերականգնման հիմնադրամ, որի միջոցով իրականացվեց եկեղեցու նորոգումն ու նրա որմնանկարների վերականգնումը:

Նախ ուսումնասիրվել են եկեղեցու որմնանկարները՝ Հայաստանի որմնանկարների վերականգնման գիտահետազոտական կենտրոնի (ղեկավար՝ Արծանիկ Հովհաննիսյան) և իտալացի վերականգնող պրոֆեսոր Ֆաբրիցիո Յակոբինիի կողմից: Բուն շինարարական աշխատանքն

ARMENIAN CHURCH
OF SAINT GEORGE IN TBILISI
RESTORATION OF THE FRESCOES

2012-2015

Georgia's capital Tbilisi - mentioned Tpkhis in medieval Armenian sources - has for centuries been the center of close spiritual and cultural ties between Armenia and Georgia.

St. George Church (1251) is one of the oldest Armenian churches of Tbilisi, which remained the principal church of the Armenian community in the city for a long period of time and is now the See of the Armenian Diocese in Georgia. In early medieval sources it was named Holy Virgin Cathedral and Gevorg Zoravar. Later, in view of its location on the renowned square of the town was named Maidan St. George or Big Fortress Church.

In 2012, upon the initiative of Bishop Vazgen Mirzakhanyan, Primate of the Diocese of the Armenian Apostolic Church in Georgia and an entrepreneur, philanthropist Ruben Vardanyan, a Foundation for Reconstruction of St. George Cathedral was established. The reconstruction of the church and restoration of frescoes were realized in 2012-2015.

Firstly, church murals were studied by the Armenian Scientific-Research Center for Restoration of Armenian Murals (Arzhanik Hovhannisyan, leading specialist and head of the center) and the Italian restorer professor

իրականացվել է վրացական մասնագիտացված կազմակերպության կողմից (ՓԲԸ Մզվիմե): Շինարարական աշխատանքներին զուգահեռ կատարվել է որմնանկարների մեծածավալ վերականգնումը, որի ընթացքում բացահայտվել են բազմաթիվ նոր պատկերներ: Նորոգվել է նաև պատկերակալը (իկոնոստաս):

Այս որմնանկարի առանձնահատկություններին մեկն այն է, որ 17-րդ դարից սկսած այն մի քանի անգամ վերանկարվել է, երբեմն ծածկվել սվաղի նոր շերտերով:

Որմնապատկերների մաքրման արդյունքում բացվեցին մի շարք նկարներ, որոնք մինչ այդ անհայտ էին. Հայր Աստված, տասներկու առաքյալները, Չարչարանաց պատկերագոտին, չորս ավետարանիչները, որոնք գմբեթատակի հատվածում են: Այդպիսով, հնարավոր դարձավ առավել ամբողջական և հստակ ընկալել եկեղեցու ներքին հարդարման ընդհանուր համակարգը:

Ս. Գևորգ եկեղեցու պատմությունը և նա որմնանկարները հանգամանորեն ներկայացված են IDeA հիմնադրամի հրատարակած քառալեզու (հայերեն, վրացերեն, անգլերեն, ռուսերեն) ալբոմ-ուսումնասիրության մեջ:

Fabrizio Iacopini. Construction works were completed by Georgian specialized company ('CJSC Mgvime'). Alongside construction works, comprehensive restoration of murals was completed, during which a number of new layers were uncovered and the iconostasis was restored.


Interestingly, since the 17th century these frescoes have been regularly restored and rarely covered by new layers of plaster.

As a result of the cleaning of the frescoes, a series of images emerged that were hitherto unknown: "God the Father", "Twelve Apostles", "Image Belt of Sufferings" and "Four Evangelists", located in the section beneath the dome that provided a more comprehensive glimpse of the inner decoration system of the church.

The history and frescoes of St. George Church are thoroughly presented in a quadric lingual research album (Armenian, Georgian, Russian, English) published by the IDeA Foundation:

Surb Gevorg Cathedral. The Frescoes,

Preface authors Karen Matevosyan, Avet Avetisyan, Yerevan, 2015.



ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

THE PHOTOS



Թիֆլիսի մեյդանը և Ս. Գևորգ եկեղեցին 20-րդ դ. Սկզբին:

Tiflis Maidan and St. George Church, early 20th c.



Արևելյան պատի կտրվածքը (զճանկարը վրականգնողական խմբի):
A section from the East wall (drawing by the restoration group).



Գմբեթի ներքը: Inside the dome.



Հայր Աստված: God the Father.



Երեք հրեշտակ: Three Angels.



Աշխատանքային դրվագներ: Work in progress.



Մարկոս ավետարանիչ (վերականգնումից առաջ և հետո):
Mark the Evangelist (before and after restoration).



Մաքրման և վերակազմման աշխատանք: Cleaning and restoring.



Ադամ և Եվա: Adam and Eve.



Որմնանկարի շերտերը փաստագրող հատված: Conservation documentation section.



Նկարիչ վերականգնողների խմբի հետ. ձախից երկրորդը՝ Արժանիկ Հովհաննիսյան (խմբի ղեկավար), չորրորդը՝ Կարեն Մաթևոսյան (գիտական խորհրդատու), 2014 թ. ձմեռ:

With the group of conservator-restorers: group leader Arzhanik Hovhannisyan (second left), research advisor Karen Matevosyan (third right), winter 2014.